

Ասորեստանայ և Պարսիկ սեպագիր Արամագրութիւնք կամ ցոյցին քաղաւածք, օրոքն Նաիրի-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբերին. քարգմանեաց Յովսէփ Վ. Սանալձեան. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1901. 80, էջ 263. գինն է Ֆր. 4,50 (Ազգային մատենադարան, հասոյ Խ.):

Մեր հարեան ազգերի գրականութիւնները շատ տեղեկութիւններ են տուել մեր երկրի պատմութեան, աշխարհագրութեան և քաղաքակրթութեան պատմութեան մասին. այսպէս են Ասորեստանցիները, Բաբելոնցիները, Ասորիները, Պարսիկները, Վրացիները, Յոյները, Լատինները, Արաբները և վերջապէս Թուրքերն ու Թաթարները: Բանասիրական քննութիւնները ապացուցել են արդէն թէ որչափ հարկաւոր են այդ-արտաքին տեղեկութիւնները՝ մեր անցեալի քննական ուսումնասիրութեան համար: Բայց այնքան ցրուած են դոքա՝ որ երկար և առանձին աշխատանք և մեծամեծ ծախքեր են հարկաւոր դրանք գտնելու և քաղելու համար, ինչ որ չէ կարելի պահանջել ամէն բանասէրից: Հասկանալի է ուրեմն թէ որչափ հարկաւորութիւն կայ մի այնպիսի ժողովածուի՝ որի մէջ հաւաքուած և ժամանակագրական կարգով դասաւորուած լինէին այս ու այն մատենագրութեան տուած բոլոր տեղեկութիւնները, նոյն իսկ ամենափայլուն և ամենաաննշան, բնագրի հետ նաև թարգմանութեամբ: Այդպիսի մի ժողովածու կարող էր բաղկացած լինել մի քանի հատորներէ, իւրաքանչիւրը նուիրուած մի լեզուի և մի մատենագրութեան:

Վիեննայի Միլիթարեան միաբանութիւնը՝ որ մինչև այժմ մեր քննական բանասիրութեան ռահիվրան և առաջնորդն է եղել, ամենայն ձեռնհասութեամբ կարող էր ձեռնարկել մեր առաջարկած նպատակին: Ազգային մատենադարանի ներկայ 40-րդ հատորը կարելի է համարել այդ ժողովածուի հիմնաքարը և առաջին հատորը. նորա մէջ հաւաքուած և ժամանակագրական կարգով դասաւորուած են ամէն ինչ որ տալիս է Ասորեստանեան-Բաբելոնական և հին պարսկական բեկեռագիր արձանագրութիւնները՝ մեր երկրի մասին: Աշխատութիւնը քաղուած է Keilinschriftliche Bibliothek (Սեպագրական մատենադարան) կոչուած բեկեռագրական լիակատար ժողովածուից, որը երբեհարա Նրադէր ուսուցչապետը հրատարակեց 1889 և 1890 թուականներին՝ Բերլինում՝ Արէլ, Բէցուդ, Ենսէն, Բայսեր և Վինքլէր ուսուցչապետների աշխատակցութեամբ:

Հայ թարգմանիչը աւելացրած է նաև այն նորագիւտ ար-

ձանադրութիւնները թարգմանութիւնները՝ որոնք չեն մտած Շրա-
գէրի ժողովածուի մէջ: Տարակոյս չկայ թէ նորանոր պեղումներ
նորանոր արձանադրութիւններ էլ երևան հանելու են. դրանց
թարգմանութիւնն էլ կարող է միննոր յաւելուածի նիւթ կազմել:

Աշխատութեան մէջ թէև թարգմանութեանց հետ նաև
քնազիրները չեն դրուած, ինչպէս պահանջում էինք վերևը, բայց
Ասորեստանեան մատենադրութեան համար իրաւամբ հարկաւոր
էր այդ կէտը զանց անել, որովհետև մեր մէջ հազիւ թէ լինի
երկու կամ երեք հոգի որ այդ լեզուից կարենայ օգտուիլ:

Արձանադրութիւնների թարգմանութիւնը բռնում է գրքի
83—226 էջերը, որ է աշխատութեան բուն և կարևոր մասը:
Սրանից դուրս էջ 5—81 դրուած է մի ընդարձակ «յառաջաբա-
նութիւն», որի մէջ թարգմանութեան մասին մի քանի տեղե-
կութիւններից յետոյ՝ ամփոփուած է մեր երկրի նախահայկական
շրջանի պատմութիւնը ըստ բեեռագրաց:

Պէտք է ասել թէ այս մասի մէջ կան ինչ ինչ նկատելի կէ-
տեր. դիտաւորն այն է որ հեղինակը Խալդեան բեեռագրերի մեկ-
նութեան համար սովորաբար ընդունուած ձևից դուրս՝ իւր
սեպհական ոճն ունենալով՝ այս տեղ էլ ազատ դործ է ածում
իւր մեկնութեանց արդիւնքը՝ իբր արդէն ուղիղ, որ կարող է
կասկածելի լինել: Երկրորդ՝ բեեռագրերի մէջ պատահած նախա-
հայ աշխարհագրական անունների մօտ փակագծի մէջ կամ ներ-
քեր ծանօթութեամբ առ հասարակ դրուած է հայկական հա-
մապատասխան անունը. բայց հարկաւոր էր նախ նոյնը երկար
ու մանր քննութեամբ հաստատել և այնուհետև իբր ուղիղ
գործածել: Երևում է թէ հեղինակը ունի մի այդպիսի աշխա-
տութիւն. բայց այդ աշխատութիւնը հրատարակութեամբ ծա-
նօթ չէ բանասիրութեան: Այս անսակէտով հարկաւ փոփոխելի
կէտեր շատ կան. օրինակ բեեռագրերի Բաբանիս վիճակը էջ 44
համապատասխան է դրուում Ոլունեաց Հաբանդ գաւառին, բայց
քիչ յետոյ՝ էջ 45 նոյն Բաբանիսը արդէն համարուում է Պա-
տապարունիք: Ո՞րն է ուղիղ:

Աւելի իրաւունք ունինք մի քանի ստուգաբանական նոր
մեկնութեանց համար. այսպէս օր. էջ 13 Ուրարտու բառին
մեկնութիւնը, իբր յն. օրթ(ղ) (= ուր-ե «լերինք») և արթա (=
արսա «բարձունք, բարձրացեալք»), ուրեմն Ուրարտու «բարձր
լեռներ», ինչպէս ուրիշները մեկնել են Արմենիա — Հարմիննի
«բարձր լեռներ»:

Այսպիսի մեկնութիւնները աւելի քան խնդրական են:

Գրքի վերջը էջ 227—259 երկու մանրամասն ցանկ կայ բե-

ւեռագրութեանց մէջ պատահած 1. պատմական և 2. աշխարհագրական բոլոր յատուկ անունների:

Հր. Աձ.

Մարիա Կորեկի, Մի մանկան հոգու պատմութիւն. վեպիկ ո՛չ մանուկների համար: Ռուսերէնից քարգմանեց Տ. Վ.: Վաղարշապատ, 1902 (գինն է 1 ռուբլի):

Մարիա Կորեկու «Մի մանկան հոգու պատմութիւն» վէպիկը մեղանշում է ամենահամեստ գրական պահանջների առջև: Այս գրուածքում բացակայում է հոգեբանական ճշտութիւն, կեանքի նկարագրութիւնը անհամապատասխան է իրականութեան և հերոսների գէմքերը միանգամայն շինծու են: Մի խօսքով մի մանկան այս պատմութիւնը գրական—գեղարուեստական անշնորհք արտագրութիւն է: Բայց և այնպէս Մարիա Կորեկի երևի բախտաւոր աստղի տակ է ծնուել, որովհետև նրա վէպիկը թարգմանուել է ռուսերէնի և ռուսերէնից հայերէնի:

Ջոն Վեյլիսկուրտ և նրա կիներ՝ Ելենան պատկանում են անգլիական բարձր դասակարգին և ունին միայն մի որդի՝ Լիոնէլ անուանով: Հայրը՝ «քնական փիլիսոփայութեան և անխառն բանականութեան» ջերմ կուսակից լինելով՝ կրթում է իւր որդուն նոյն սկզբունքներով և միաժամանակ հսկում է, որ կրօնական և քրիստոնէական զգացմունքի մի շող անգամ չթափանցէ իւր որդու սիրտը: Միւս կողմից այս «յառաջագիմական» հայրը քայքայում է Լիոնէլի առողջութիւնը, արգելելով իւր միակ որդուն զբօսանք, մարմնամարզութիւն, մանկական դուարձութիւններ, — չմոռանանք որ այդ անում է գիտութեան և գրական ուսմունքների ծանօթ մի հայր: Վայրենի սեւամորթ մարդն անգամ իւր երեխային այնպէս չի վերաբերուի, ինչպէս այս դաժան անգլիացի ջենդլմէնը: Ո՛չ մի բարի զգացմունք, ո՛չ մի հայրական քնքշութիւն. Ջոն Վեյլիսկուրտ դուրս է բերուած, որպէս մի հալածիչ ոտոխ իւր միակ որդու: Ելենան՝ նրա կինը, որի սրտից ամուսինը յաջողութեամբ արմատախիլ է արել